ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ 2100-ԱՄՅԱԿԻՆ

Դեկտեմբերի 5-ին ՀՀ ԳԱԱ նիստերի մեծ դահլիճում տեղի ունեցավ հին աշխարհի հայ նշանավոր քաղաքական, ռազմական և մշակութային գործիչ Տիգրան Մեծի գահակալության 2100-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի լիագումար նստաշրջանի բացումը: Գիտաժողովի մասնակիցներին ողջունեց և նրանց աշխատանքին հաջողություն մաղթեց ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Ֆ. Սարգսյանը:

Ողջույնի խոսքով հանդես եկան Հայ Առաքելական եկեղեցու Արարատյան թեմի առաջնորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանը և ՀՀ ԱԺ փոխնախագահ Վ. Հովհաննիսյանը: Առաջինը կարևորեց Տիգրան Մեծի տեղը ազգային քրիստոնեական հիմնարար արժեքային համակարգի ձևավորման գործում, իսկ երկրորդը՝ Տիգրան Մեծի դերակատարությունը ազգային ամուր պետականության կերտման տեսակետից: «Տիգրան Մեծի հաղորդած իմպուլսով հայ ժողովուրդը դարձավ ազգ, և հայ պետականությունը գոյատևեց 500 տարի»,– ասաց նա:

Լիագումար նստաշրջանի առաջին նիստում լսվեցին մի շարք զեկուցումներ: Հ. Հակոբյանը հանդես եկավ «Տիգրան Մեծի անձի և գործի պատմական նշանակությունը» թեմայով: Բ. Հարությունյանը խոսեց Տիգրան Մեծի տերության մասին: Ն. Հովհաննիսյանի զեկուցման վերնագիրն էր «Տիգրան Մեծը և հայկական կայսրությունը արաբական պատմագրության մեջ»: Հ. Հովհաննիսյանն անդրադարձավ Տիգրան Մեծի ժամանակաշրջանում հելլենիստական թատրոնին: Վ. Հարությունյանը իր զեկուցման մեջ ներկայացրեց Տիգրանակերտ մայրաքաղաքը:

Լիագումար նստաշրջանի երկրորդ նիստում Ա. Ստեփանյանը հանդես եկավ «Հելլենիստական Հայաստանի ընկերային-քաղաքական կյանքի մի հարացույցի մասին» զեկուցումով, Ա. Այվազյանը՝ «Հին Հայաստանը որպես «ազգային պետություն» թեմայով: Էդ. Դանիելյանը խոսեց Տիգրան Մեծի պետական-քաղաքական ռազմավարության մասին: Ա. Մուշեղյանի զեկուցման թեման էր՝ «Տիգրան Մեծը ըստ Մովսես Խորենացու և Պլուտարքոսի՝ հայ և օտար սկզբնաղբյուրների խորապատկերի վրա»: Ս. Կրկյաշարյանը հանդես եկավ «Տիգրան Մեծը քաղաքաշինարար» զեկուցումով, իսկ Պ. Հովհաննիսյանը՝ «Տիգրան II Մեծի գործունեության լուսաբանումը Նիկողայոս Ադոնցի աշխատություններում» թեմայով:

Դեկտեմբերի 6-ին գիտաժողովն իր աշխատանքները շարունակեց Օշականի Սբ. Մեսրոպ Մաշտոցի դպրատանը: Մինչ այդ գիտաժողովի մասնակիցներն այցելեցին Ադցքի գամբարան՝ հիշատակի տուրք մատուցելու այնտեղ ամփոփված հայոց արքաներին: Երախտագիտության այդ ծեսին իրենց մասնակցությունը բերեցին նաև հայոց բանակի զինվորները:

Օշականում գիտաժողովի մասնակիցներին հյուրընկալող Արագածոտնի թեմի առաջնորդ Տ. Թորգոմ վրդ. Տոնիկյանն ասաց, որ օրն արքայական խորհուրդ ունի, քանի որ հայ եկեղեցու տոնացույցով նշվում է հայոց արքա Արզարի հիշատակի օրը:

Գիտաժողովի մասնակիցներին ողջունեց և նրանց հաջողություն մաղթեց Արագածոտնի մարզպետ Գ. Գյոզալյանը:

Գիտաժողովի երրորդ լիագումար նիստում զեկուցումներով հանդես եկան՝ Հ. Սիմոնյանը («Հայ արքաների աճյունները Աղցք ավանում թաղելու շարժառիթները և այնտեղ անթեղված արքաների ծագումնաբանության խնդիրները»), Ռ. Վարդանյանը («Տիգրան Բ. Մեծ (պատմական դիմանկար»), Մ. Հասրաթյանը («Տիգրանակերտի ճարտարապետությունը»), Դ. Գասպարյանը («Տիգրան Մեծի կերպարը հայ ժողովրդի հոգեկերտվածքի ձևավորման գործում») և Ս. Մուրադյանը («Հովհաննես Շիրազի «Տիգրան Մեծի վիշտը և հավերժությունը» պոեմը»):

Այնուհետև գիտաժողովն իր աշխատանքները շարունակեց երեք մասնաճյուղերում՝ «Տիգրան Մեծը որպես քաղաքական գործիչ» (նախագահությամբ՝ Էդ. Դանիելյանի), «Տիգրանյան Հայաստան. երկիրը և ժամանակը» (նախագահությամբ՝ Մ. Հասրաթյանի) և «Տիգրան Մեծը հայ և համաշխարհային մշակույթում» (նախագահությամբ՝ Ս. Մուրադյանի):

Առաջին մասնաճյուղում ներկայացված զեկուցումներում հեղինակները անդրադարձան Տիգրան Մեծի արտաքին քաղաքականության տրամաբանությանը, հ. ա. 80–70-ական թվականների հայոց բանակի մարտավարության և ռազմավարության առանձնահատկություններին, ռազմարվեստի պատմության մեջ Արածանիի ճակատամարտի նշանակությանը և այլն (զեկուցողներ՝ Վ. Աբդարյան, Ե. Գրեկյան, Է. Մինասյան, Ս. Մարտիկյան, Ա. Գևորգյան, Մ. Օհանյան, Ե. Մարգարյան, Ա. Եղիազարյան):

Երկրորդ մասնաճյուղում ելույթ ունեցողներն իրենց զեկուցումներում անդրադարձան հելլենիզմի դարաշրջանում հայ հեթանոսական հավատալիքներին, Տիգրան Մեծի զինանշանին, Տիգրան Մեծի թագի պատկերային-խորհրդանշական իմաստաբանությանը և այլ հարցերի (զեկուցողներ՝ Ս. Պետրոսյան, Պ. Բարսեղյան, Տ. Հայազն (Պետրոսյանց), Գ. Մարտոյան, Հ. Մարգարյան, Ռ. Փալանջյան, Ա. Գրիգորյան, Դ. Քերթմենջյան):

Երրորդ մասնաճյուղում հանդես եկողներն արքայից արքայի կերպարին անդրադարձան որպես գրական ստեղծագործությունների հերոսի (զեկուցողներ՝ Ա. Մովսիսյան, Ա. Պետրոսյան, Ս. Մխիթարյան, Վ. Սաֆարյան, Կ. Միքայելյան, Մ. Նավոյան, Ա. Ասատրյան, Կ. Ջաղացպանյան):

Գիտաժողովը նախաձեռնել ու կազմակերպել էին ՀՀ ԳԱԱ հումանիտար գիտությունների բաժանմունքը, Հայ Առաքելական եկեղեցու Սբ. Մեսրոպ Մաշտոց դպրատունը և Համազգային հայ կրթական և մշակութային միությունը: